



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



ՄԵՐ ՏԻՐՈՋ ՅԻՍՈՒՄ ԶՐԻՍՏՈՍԻ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ  
 ՀՈՒՆԿՈՒՄԻՍ Ի. ԿԱՐԱՊԵՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԵՋ ՄԱՏՈՒՑԱԾ Ս.  
 ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔԻՆ

**ՄԵՐ ԿԵԱՆՔԵՐԸ ԱՊՐԻՆՔ ՓՐԿՉԻՆ ՀԱՒԱՏԱՐՄՈՒԹԵԱՆ ՄԵՋ.  
 ՀԱՒԱՏՔՈՎ, ՅՈՅՍՈՎ ՈՒ ՍԻՐՈՎ ԼԵՑՈՒՆ**

*ՊԱՏՉԱՄԵՅ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ*

Մեր եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Կիրակի, 13 Յունուարը տօնն է մեր Տիրոջ եւ Փրկչին Յիսուսի Զրիստոսի անուանակոչութեան, իսկ այս տարի որովհետեւ Ս. Յովհաննու Կարապետի տօնը կը զուգահիսի Շաբաթ, 19 Յունուարին, եւ նկատի ունենալով, որ այս տօնը նաեւ անուանակոչութեան տօնն է Հոլովոտի Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ, ուստի Կիրակի, 13 Յունուարին, եպիսկոպոսական հանդիսաւոր սուրբ եւ անմահ Պատարագ մատուցուեցաւ:

Ս. Պատարագը մատոյց թեմիս բարեշան Առաջնորդ՝ Բարձր. Տ. Սուշեղ Ս. Արք. Մարտիրոսեան: Ս. Սեղանին սպասարկեցին Զրիստոնեական Դաստիարակութեան Բաժանմունքի վարիչներէն Հոգշ. Տ. Պարթեւ Վրդ. Կիւլիմեան եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Վիգէն Ա. Զիւլ. Վասիլեան: Ս. Պատարագի ընթացքին կատարուեցաւ նաեւ դարաց ձեռնադրութիւն. դպրութեան չորս աստիճանները ստացան եկեղեցւոյ խոնարհ սպասարկողներէն Յակոբ Լաթօրիկեան եւ Երուանդ Սարեան: Ձեռնադրութեան ընթացքին խարտաւիլակութիւն կատարեց եւ ձեռնադրեալը Սրբազան Հօր ներկայացուց եկեղեցւոյս հոգեւոր հովիւ՝ Արժ. Տ. Վիգէն Ա. Զիւլ. Վասիլեան:

Իր պատգամ քարոզին մէջ, Առաջնորդ Սրբազան Հայրը նախ փառք եւ գոհութիւն յայտնեց Աստուծոյ, այս օրուան համար, հայրական իր խրատները տուաւ նորոգ ձեռնադրեալներուն, թելադրելով անոնց՝ ապրելու իրենց կեանքը սրբութեամբ եւ հաւատքով, օրինակելի վարքով եւ ծառայական առաւել ոգիով:

Ապա Սրբազանը անդրադարձաւ օրուան խորհուրդին՝ Յիսուս Զրիստոսի անուանակոչութեան, Աւետարանիչներէն եւ մարգարեական օրհներգութիւններէն գեղեցկօրէն միահիւսելով այն ճշմարտութիւնը, որ Յիսուս ինք միայն ծնաւ Փրկելու աշխարհն ու մեղաւոր մարդկութիւնը, եւ արդէն իսկ իր Սուրբ անունը՝ Յիսուս կը նշանակէ Փրկիչ: Սրբազանը անդրադարձաւ նաեւ Ս. Յովհաննէս Մկրտիչի ծնողաց բերնէն արտաբխած

այն մարգարեական խօսքերուն, որով անոնք տակաւին Քրիստոսը չծնած Ս. Յովհով ճանչցան ու դաւանեցան Ասոր Փրկիչ ըլլալու հանգամանքը, նոյնիսկ եղիսաբէթի որովայնին մէջ մանուկ Յովհաննէսը խաղաց, շարժեցաւ, երկրպագելով իր եւ բոլորիս Տիրոջ: Ս. Յովհաննէս Աստուծոյ Որդիին մարդեղութեան ճանապարհին նախակարապետը, Արդարութեան Արեգակին ծագումը ծանուցանող արուսեակը, Բանին Աստուծոյ գալուստը աւետողը, կարապետը եւ միաժամանակ Աստուծոյ Գառնուկը մկրտողը, յորովայնէ դաւանեցաւ եւ երկրպագեց Փրկչին: Սրբազան Յայրը կոչ ուղղեց բոլորին եւ ըսաւ. «Մենք ալ մեր կեանքերը ապրինք Փրկչին հաւատարմութեան մէջ. հաւատքով, յոյսով ու սիրով լեցուն»:

Ս. Պատարագի աւարտին, տեղի ունեցաւ մատաղօրհնէք: Բաշխուող մասին հետ մատաղն ալ բաժնուեցաւ, եւ հաւատացեալներ, մեծ շանդավառութեամբ երգեցին «Կիլիկիա» մաղթերքը ու ապա իրենց տուները վերադարձան հոգեւոր ապրումներով լիցքաւորուած, ուրախութիւնը իրենց սրտին եւ մատաղը՝ իրենց ձեռքին:

Յայտնենք նաեւ, որ յետմիջօրէին, եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ տեղի ունեցաւ եկեղեցւոյ անուանակոչութեան աւանդական տօնախմբութիւնը, սիրոյ ճաշի սեղանի շուրջ: Յատուկ պատիւի արժանացաւ եկեղեցւոյ բազմամեայ ծառայողներէն Տիար Ծորճ Սահակեան: Գեղարուեստական յայտագիրին մասնակցութիւն բերին Ազգ. Ռ. եւ Ա. Փիլոպոս վարժարանի աշակերտները:

*DURING DIVINE LITURGY AT ST. GARABED CHURCH ON THE FEAST OF THE NAMING OF OUR LORD JESUS CHRIST*

**LET US LIVE OUR LIVES DEVOTED TO OUR SAVIOR  
AND FILLED WITH FAITH, HOPE AND LOVE**

*ASSERTED THE PRELATE*

On Sunday, January 13<sup>th</sup>, the Feast of the Naming of our Lord Jesus Christ as well as the forthcoming name day of St. Garabed Church was celebrated with Episcopal Divine Liturgy celebrated by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate.

The Prelate was assisted at the altar by Christian Education Co-Director Very Rev. Fr. Barthev Gulumian and Parish Pastor Archpriest Rev. Vicken Vassilian. During the service, the Prelate also ordained Hagop Latorigian and Yervant Sarian as acolytes.

The Prelate began his sermon by giving thanks to God for the occasion and by advising the newly ordained acolytes to live their lives piously and with faith. In speaking of the day's feast, the Prelate reiterated that Jesus was born to save mankind and continued by reflecting on the life of St. John the Baptist who, even before Christ was born, professed to His being our Savior. He concluded by urging the faithful to live their lives devoted to our Savior and

filled with faith, hope, and love. At the conclusion of Divine Liturgy, the Prelate conducted the blessing of madagh.

The faithful then headed to “Karapetian” Hall for a reception to celebrate the name day of the church. During the reception, Mr. George Sahagian was honored for his decades-long service to St. Garabed Church. An artistic program also took place with the participation of Rose and Alex Pillibos School students.